


ԳԵՎՈՐԳ · ԳՐԻԳՈՐԻ · ԳԵՎՈՐԳՅԱՆ



Գ. Գ. Գեորգյանը ծնվել է 1889 թ. Ղզլարում, ծառայողի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է Ղզլարի քաղաքային ուսուական 5-դասյա դպրոցում, որը շավարած, շայ բարեգործական ընկերության հաշվին ուսումը շարունակելու է ուղարկվել նոր Նախիջեանի թեմական դիշերութիկ դպրոցը: Այստեղ էին սովորում տասնյակ ղզլարցի պատանիներ, որոնց թվում նաև ապագա անվանի կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանը:

Թեմական դպրոցում Գ. Գեորգյանը աշակերտ է անվանի հայագետներ Ա. Զամինյանին,

Ե. Շահազիզին, Հր. Աճառյանին, իո. Թանգյանին (Հետագայում Մոսկվայի լազարյան ճեմարանի տեսուչ), Գեորգ սարկավագ Չորեքշյանին (Հետագայում ամենայն հայոց կաթողիկոս Գեորգ 6-րդ): Վերջինս դասավանդել է հայոց եկեղեցու պատմություն և երգեցողություն: Հենց նա էլ, նկատելով Գ. Գեորգյանի ձայնական տվյալները, պատահուն սովորեցնում է նոաագրություն և հանձնարարում մեներգեր: Աշակերտության տարիներին նա երգում է նոր Նախիջեանի և Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու քսուտձայն խմբում, որի խմբավարը Գեորգ Չորեքշյանն էր:

Թեմական դպրոցն ավարտելուց հետո Գ. Գեորգյանը երկու տարի ուսուցիչ է եղել Ղզլարի հայոց 5-ամյա երկսեռ դպրոցներում:

1912 թ. նա ընդունվում է Պետերբուրգի գյուղատնտեսական ուսումնարանը, միաժամանակ սովորելով նաև կոնսերվատորիային կից երաժշտական դպրոցի վոկալ դասարանում: Պետերբուրգում է տեղի հայոց եկեղեցու քառաձայն խմբում, որի ղեկավարն էր կոնսերվատորիայի ուսանող Խոմանոս Մոմանոս Մելիքյանը:

1915 թ. Գ. Գեորգյանը զորակոշվում է րանակա: Պատերազմից հետո նա կրկին անցնում է ուսուցչության: 1920—1924 թթ. աշխատում է Ղզլարի հայոց երկսեռ դպրոցներում, 1924—1926-ը՝ Աստրախանում, սկզբում՝ որպես ուսուցիչ, այնուհետև նույն դպրոցի վարիչ: Աստրախանի հայոց դպրոցում նա կազմակերպում է երեկոյան դասրնթացներ, ուր հաճախում են հայ երիասարգները:

1925 թ. ամռանը Գ. Գեորգյանը մասնակցում է Հյուրախաղերով Աստրախան եկած հայ դերասանական խմբի ներկայացումներին: Խմբում են ե-

դել Թիգա Գուլաղյանը, Օ. Մայսուրյանը, Իերուան
ամսութինները, Պահարևն և ուրիշներ։

1926—1930 թթ. Գ. Գևորգյանը աշխատել է
Դոնի Ռուսովիկ և Նոր Նախիջևանի Հայոց 8-ամյա
դպրոցներում։ Միաժամանակ նա ուսանում է տեղի
երաժշտության տեխնիկումի վոկալ գասարանում։

Դեռևս Պալարում եղած ժամանակ (1920—
24 թթ.) Գ. Գևորգյանը իր բնկերների հետ կազ-
մակերպում են Համերդներու ու դասախոսություն-
ներ։ Խրանց ներկտյացումներին մշտապես մաս-
նակցում է տեղի Հայ երիտասարդներից կազմ-
ված նվազախումբը, որի գեկավարն էր ապագա
Երաժիշտ Նիրկիտ Մկրտչյանը։

Ռուսովիկ Հայ զերասանական գրամա-օպե-
րեալային խմբում նույնպես ակադիվ մասնակցու-
թյուն է ունենում Գ. Գևորգյանը։ Անուշը օպե-
րայում նա կատարել է Սարոյի գերրու Նույն խրմ-
րում են Հանդես եկել նաև Դանզաս ամուսինները։

1930 թ. Գևորգյանը վերջնականապես թող-
նում է մանկավարժությունը և լիովին նվիրվում
երգեցողությանը։ Դոնի Ռուսովում նա կազմա-
կերպում է Արևելյան երգի ու պարի անսամբլ,
որն տուաշինն էր Հյուսիսային Կովկասում։ Ան-
սումրի զեկավար է Հրավիրվում կոմպոզիտոր
Երվանդ Սահապունին։ Սնսամրլը կատարում է
մեծ մասամբ Հայկական, ինչպես և այլ ագզերի
երգեր ու պարեր (Վրացական, ագրելշանական,
ուստական, թաթարական և այլն)։ Չուառվ իրա-
վունք է ձեռք բերում Հյուրախազերի մեկնելու
Սովետական Միության քաղաքներու։

1935 թ. Գ. Գևորգյանը Մոսկվայում կագ-
մակերպում է «Կովկասյան երգի-պարի ագզա-
կական անսամբլ», որը երկար աարիներ գործում
էր Ռուսաստանի Ֆեդերացիայում։ Անսամբլի
նուատակն էր Հայկական երգն ու պարը պրոպա-
գանգել ուրիշ աղջերի մեջ, մոաիկից ծանոթացնե-
ցական աղջերի մեջ, մոաիկից ծանոթացնե-

լով նրանց մեր ժողովրդի արվեստին ու մշակույ-
թին։

Հայրենական սեծ պատերազմի տարիներին
Գ. Գևորգյանն աշխատում է Համերգային ըրի-
զադում, որը դանվում էր ՍՍՀՄ պաշտպանության
մինիստրի արամադրության ներքո։ Առաջ շարժ-
վելով զորքերի հետ, ըրիգազր մասնակցում է նաև
Բուզարիայի և Ռումինիայի ազատագրմանը։

Պատերազմի ավարտից հետո (1945) Գ.
Գևորգյանը նորից անցնում է Մոսկվայի էսարա-
կա, անհատական ելույթներ ունենում Միության
աւարբեր վայրերում մինչև թոշակի տնցնելը։

Սկսած 1958 թ. «Կիզլյարսկա պար» թեր-
թում ապագրել են նրա հոգվածներն ու ակնարկ-
ները։

Նա «Գեմիր-գրից» ծածկանուով հոգվածներ
է տպագրել զանազան թերթերում («Մուրճ» և
Մանգաց» շարաթաթերթ և այլն)։

Գ. Գևորգյանը կատարել է նաև թարգմանու-
թյուններ։

Ղզլարի պաամության և ազգագրության մա-
սին ներկա աշխատանքը Գ. Գևորգյանը սկսել է
գրել 1958 թվականից։ Բացի այն բազմաթիվ
գրքերից ու փասաթղթերից, որ նա տարիների
ընթացքում ուսումնասիրել և հավաքել է Ղզլարի,
Աստրախանի, Փրոզնու, Մախաչկալյայի, Մոսկ-
վայի և Երևանի արխիվներում ու գրադարաննե-
րում, Գ. Գևորգյանը զրույցներ է ունեցել նաև
Ղզլարի աարեց բնակիչների հետ (որոնցից շա-
տերն արգեն չկան), նա օգտագործել է նաև մի
քանի զգլարցիների գրավոր հուշերը Ղզլարի անց-
յալի մասին։

Գ. Գևորգյանին, իր աշխատանքի ընթացքում,
մշտական խորհուրդներով ու ցուցումներով օգնել
են Հնագիտական և ազգագրության ինսահառուտի
ազգագրության ու բանահյուսության բաժինների
համապատասխան մասնագետներ։